ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ
Գերաշնորհ
Տ. Վահան Եպս Յովհաննէսեան, Առաջնորդ
`Հայրապետական Պատուիրակ
Արեւմտեան Եւրոպայի

DIOCÈSE DE FRANCE DE L'ÉGLISE
APOSTOLIQUE ARMÉNIENNE
Son Excellence
Monseigneur Vahan HOVHANESSIAN
Primat de France, et Légat pontifical à
l'Europe de l'Ouest

No. 16, Tome 3 — E-BULLETIN — Le 30 juin 2016

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԿԻՐ



Յունիս 24-ին «Այցելութիւն Առաջին Քրիստոնեայ Երկիր» կարգախօսով եռօրեայ այցելութեամբ Հայաստան ժամանեց Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ Քահանայապետ Ֆրանսուա Ա.: Զուարթնոց օդակայանին մէջ Պապը դիմաւորեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ հանրապետութեան նախագահ Պրն. Սերժ Սարգսեան: Պաշտօնական բարիգալստեան արարողութիւնը տեղի ունեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ: Երեկոյեան տեղի ունեցաւ Ֆրանսուա Պապի եւ Վեհափառ Հայրապետի հանդիպումը, ներկայութեամբ Կաթոլիկ Եկեղեցւոյ պատուիրակութեան եւ Հայ Եկեղեցւոյ եպիսկոպոսներու: Վեհափառ Հայրապետը բարի գալուստ մաղթեց Ֆրանսուա Պապին Հայաստանի աստուածաշնչական հողին վրայ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ան յայտնեց իր եղբայրական սէրն ու մաղթանքները Ս. Քահանայապետին եւ իր պատուիրակութեան: 25 Յունիսի առաւօտուն երկու Հովուապետները այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ Յեղասպանութեան յուշահամալիր, ուր անոնք միացան նախագահ Սերժ Սարգսեանի եւ Առաջին Տիկնոջ: Հոգեւորականները թափօրով յառաջացան պատուոյ պահակներու մէջէն դէպի Ծիծեռնակաբերդ, ուր յատուկ սրբոց բարեխօսութեան արարողութիւն կատարուեցաւ: Նոյն օրը Հովուապետները օդանաւով մեկնեցան Գիւմրի, ուր զիրենք դիմաւորեցին Շիրակի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Միքայէլ Եպիսկոպոս Աջապահեան եւ Հայաստանի Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Առաջնորդ Ռաֆայէլ Արք. Մինասեան: Պաշտօնական ընդունելութեամբ Վեհափառ Հայրապետն ու Սրբազան Քահանայապետը հասան Գիւմրիի Ս. Վարդանանց կեդրոնական հրապարակ, ուր Ս. Պապը պատարագեց: Յաջորդ օրը Կիրակի 26 Յունիսին Վեհափառ Հայրապետը պատարագ մատուցեց Ս. Էջմիածնի Տրդատայ Դրան բացօթեայ խորանին վրայ, աղօթակցութեամբ Ս. Պապի եւ ներկայութեամբ աւելի քան 15000 հոգիի: Յետմիջօրէին երկու Հովուապետները եպիսկոպոսներու եւ կարտինալներու հետ ճաշեցին, որմէ ետք հանդիսաւորապէս միացեալ յայտարարութիւն մը ստորագրեցին: Ապա Պապը այցելեց Խոր Վիրապ, ուր Ս. Գրիգոր բանտարկուած էր 15 տարի: Կարճ աղօթքէ ետք երկու Հովուապետները վանքի դէպի Արարատ նայող պարիսպին վրայէն աղաւնիներ արձակեցին ի նշան խաղաղութեան: Ապա եզրափակելով իր ուխտագնացութիւնը դէպի «Առաջին Քրիստոնեայ Երկիր», Ս. Պապը մեկնեցաւ օդակայան:

## ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԺՈՂՈՎ



Երկուշաբթի 30 Մայիսին, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեանի, Թեմական Խորհուրդի Ատենապետ Պրն. Փաթրիս Ճօլօլեան, Թեմական Պատգամաւորական Ժողովի փոխ ատենապետ եւ Տօնավաճառի Յանձնախումբի ատենապետ Պրն. Հայկազ Կէօրտեպաք-Տրդատեան, Փարիզի եւ շրջակայ քաղաքներու 5 ծուխերու հոգեւոր հովիւները եւ ծխական խորհուրդներու անդամներ հանդիպում ունեցան քննարկելու համար ծրագիրը Առաջին Հայկական Բացօթեայ Փառատօնի Հայ Եկեղեցւոյ կազմակերպութեամբ: Ինչպէս նախապէս յայտարարուած էր, փառատօնը տեղի պիտի ունենայ Ալֆորվիլի Կոմիտաս փողոցին մէջ, Սեպտեմբեր 17-ին, ժամը 11-19: Հոն պիտի գտնէք հայկական եւ միջերկրականեան խոհանոցներու զանազան ճաշատեսակներ ճամբու երկու եզերքներուն դրուած սեղաններու վրայ, երաժշտական եւ զուարճանքի յայտագիր՝ պարախումբերով, երգիչներով եւ ձայնապնակները համակարգող մասնագէտով: Հոն պիտի գտնէք նաեւ հայերէն եւ ֆրանսերէն գիրքեր: Փառատօնի պաշտօնական բացումը պիտի կատարուի Առաջնորդ Սրբազանի, Թեմական Խորհուրդի եւ Փառատօնի Յանձնախումբի ատենապետներու կողմէ ժապաւէնի կտրումով: Եկեղեցական թափօր եւ արարողութիւն մըն ալ նախատեսուած է այս առթիւ: Պիտի հրաւիրուին նաեւ բարձրաստիճան անձնաւորութիւններ: Յանձնախումբը որոշած է գրքոյկ մը հրատարակել այս առթիւ, որ պիտի պարունակէ փառատօնի յայտագիրը, ժողովուրդի մաղթանքներն ու ծանուցումները, ինչպէս նաեւ ճաշացուցակը: Կամաւորներու պէտք ունինք որպէսզի օգնեն օրուան աշխատանքներուն: Եթէ կը փափաքիք կամաւորաբար օգնել, կապ հաստատեցէք Առաջնորդի Գրասենեակին հետ՝ bureauduprimat@diocesearmenien.fr :

## ԹԵՄԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ



Թեմի ծրագիրներու ֆինանսաւորման կարիքներով մտահոգ, Շուշան Դուրեան, Փարիզի Մայր Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամ, քանի մը ամիս առաջ առաջարկեց Առաջնորդ Սրբազանին, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդին, աճուրդ մը կազմակերպել որոշ գումարներ գոյացնելու նպատակով: 6 ամիս ետք՝ Կիրակի 19 Յունիսին «Նուրիան Ֆրէնկեան» սրահը վերածուած էր աճուրդի համար յարդարուած շատ գեղեցիկ սրահի, բազմաթիւ իւղանկարներով եւ արուեստի գործերով: Աճուրդի դրուած առարկաներուն մէջ կային Շապանեանէ եւ 18-րդ եւ 19-րդ դարերէ իւղանկարներ: Նախորդ օրը առարկաները ցուցադրութեան դրուած էին փափաքողներուն համար: Աճուրդի օրը մասնակիցները սկսած էին գալ ժամը 16-ին: Մինչ Շուշանը, օգնական ունենալով Ռենան եւ Ատրինէն, եկողները կ՚ընդունէր, բաժակ մը գինի հրամցնելով: Աճուրդը սկսաւ ժամը 16:30-ին Սրբազան Հօր բացման խօսքով, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորհակալութիւն յայտնեց Շուշանին՝ այս ձեռնարկը առանձինն կազմակերպելու համար: Աճուրդի ընթացքին իւրաքանչիւր առարկայ կը նկարագրուէր, կը մեկնաբանուէր Ատրինէի եւ Շուշանի կողմէ եւ ներկաներուն կը ցուցադրուէր Օհան եւ Արմէն Դուրեաններու կողմէ: Երեկոյեան Շուշանի եւ իր ընկերակիցներուն ջանքերը արդիւնաւորուեցան: Քանի մը ժամուան մէջ 11.200 եւրօ կարելի եղաւ հաւաքել, որ պիտի տրամադրուի թեմի ընկերային, կրթական եւ հոգեւոր ծրագիրներուն համար: Շնորհակալութիւն Շուշան Դուրեանին, Աստուած օրհնէ ձեզ բոլորդ:

## ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ





Ուրբաթ 17 Յունիսին Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան հանդիպում ունեցաւ Հայ Եկեղեցւոյ Ֆրանսայի երիտասարդաց խումբի կեդրոնական վարչութեան նախագահ Լուսինէ Արզումանեանի եւ վարչութեան քարտուղար Սարգիս Իշխանեանի հետ: Այս աշխատանքային ժողովի օրակարգն էր ամբողջացնել եւ վաւերացնել «Հայ Եկեղեցւոյ Ֆրանսայի Երիտասարդաց Ընկերակցութեան» (AJEA) ստեղծման թղթածրարը: Այս Ընկերակցութեան նպատակն է քաջալերել իր անդամները սորվելու, գործածելու, յարգելու եւ վկայելու քրիստոնէական հաւատքի ուսուցումները, ինչպէս նաեւ օժանդակել եւ աշխատիլ Հայ Եկեղեցւոյ զօրացման եւ հայ մշակութային ժառանգութեան զարգացման համար: Այսօր Ֆրանսայի բազմաթիւ քաղաքներ ունին իրենց Հայ Եկեղեցւոյ երիտասարդաց խումբերը, որոնք տարին անգամ մը ընդհանուր ժողով կը գումարեն: Պէտք է նշել որ վերջին ժողովին որ տեղի ունեցաւ Լիոնի մէջ 6 Փետրուար 2016-ին, մասնակցեցան 150 երիտասարդներ Ֆրանսայի բոլոր կողմերէն: Այն երիտասարդները որոնք կը փափաքին Հայ Եկեղեցւոյ երիտասարդաց խումբեր ստեղծել այն քաղաքներուն մէջ ուր չկան այդպիսի խումբեր, կրնան դիմել Կեդրոնական Վարչութեան՝ jeunessediocesaine@gmail.com :

## ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ - ՎԱՐԴԱՎԱՌ



Յիսուս Քրիստոսի այլակերպութեան տօնը Հայ Եկեղեցւոյ 5 գլխաւոր՝ տաղաւար տօներէն մէկն է: Ըստ Աստուածաշունչի, մեր Տէրը իր հետ առաւ իր երեք առաքեալները՝ Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը Թաբոր լերան վրայ աղօթելու համար: Եւ երբ սկսաւ աղօթել, «Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան» (Մատթէոս 17.2): Երբ երեք առաքեալները վախցած նայեցան եւ անդրադարձան ինչ կը կատարուէր, անոնք տեսան Մովսէսն ու Եղիան Քրիստոսի երկու կողմերը: Ներշնչուած եւ տպաւորուած իրենց տեսածով, Պետրոս դարձաւ Տիրոջ եւ ըսաւ. «Վարդապետ, լաւ է որ հոս մնանք. երեք վրաններ շինենք՝ մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւս Եղիայի համար: Սակայն չէր գիտեր թէ ի՞նչ կ՚ըսէր» (Ղուկաս 9.33): Երբ Պետրոս իր ուրախութիւնը կարտայայտէր, երկինքէն ձայն մը լսուեցաւ որ կը հաստատէր Քրիստոսի աստուածութիւնը եւ կ՚ըսէր. «Այս է իմ ընտրեալ Որդիս, անոր մտիկ ըրէք» (Ղուկ. 9.35): Այս դէպքը պատմական հիմնադրութիւնն էր Այլակերպութեան Տօնին: Սուրբգրական պատումը չի նշեր դէպքի թուականը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ որոշեց այս տօնը զետեղել հին հայկական հեթանոսական Վարդավառի տօնին օրը, որ կապուած էր ամրան բերքին հետ: Այս տարի Այլակերպութեան տօնը կը նշուի Կիրակի 3 Յուլիսին բոլոր հայկական եկեղեցիներուն մէջ: Փարիզի Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան, որ պիտի խօսի այս աստուածաշնչական դէպքի մեր այսօրուան կեանքին հետ ունեցած կապի մասին: Ըստ Հայ Եկեղեցւոյ աւանդութիւններուն, տօնին նախորդող շաբաթը պահքի շաբաթ է: Տօնին յաջորդող Երկուշաբթին Մեռելոց է:

## ԳԵՐԱՊԱՅԾԱՌ Յ. ԹԷՅՐՈՒԶԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ



Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեանի հրաւէրով, Ֆրանսայի Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերապայծառ Տ. Յովհաննէս Եպս. Թէյրուզեան այցելեց Ֆրանսայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդարան, Փարիզ: Երկու առաջնորդները խորհրդակցեցան եւ քննարկեցին համագործակցութեան միջոցները եւ ապագայի ծրագիրները որոնք կրնան զօրացնել երկու եկեղեցիներու կապերը եւ ընդհանուր հայ համայնքը Ֆրանսայի: Խօսակցութեան առարկայ դարձաւ մանաւանդ երիտասարդութեան մասնակցութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ եւ Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց կազմակերպութիւններու գործակցութիւնը: Խօսուեցաւ նաեւ Պապի Հայաստան կատարելիք այցելութեան մասին: Նշենք, որ երկու առաջնորդներն ալ մասնակցեցան Պապի Հայաստան այցելութեան առթիւ կազմակերպուած բոլոր միջոցառումներուն:

## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ...

- Չորեքշաբթի 6 Յուլիսին Ս. Գիրքի սերտողութիւն տեղի պիտի չունենայ:
- Կամաւորաբար օգնելու համար Հայ Եկեղեցւոյ Ֆրանսայի Թեմի Առաջին Բացօթեայ փառատօնին՝ կապուեցէք Առաջնորդի Գրասենեակին հետ՝ bureauduprimat@diocesearmenien.fr :
- Առաջնորդի Գրասենեակին հետ կապ պահելու համար կը խնդրուի գործածել ***ՄԻԱՅՆ*** հետեւեալ հասցէն՝ bureauduprimat@diocesearmenien.fr : Միւս հասցէները շուտով պիտի ջնջուին եւ պիտի չհասնին Առաջնորդի Գրասենեակ:
- Կաթողիկէ Եկեղեցւոյ Քահանայապետի Հայաստան այցելութեան առթիւ հրապարակած յայտարարութիւնը կարդալ այստեղ: